—Ուրեմն, խնդրեմ, երկու սենեակ,— ասացի կառքից իջնելով:

—Բայց, pardon, Melle, իմ տունս հիւրանոց չէ,— պատասխանեց նա վիրաւորուած շեշտով:

Ընդհանուր ապշութիւն:

Այն ժամանակ ցոյց տուի իրան իր քարտը:

Մարդը նայեց զարմանքով, յանկարծ ձեռք խփեց ճակտին ու այնպէս վարակիչ կերպով սկսեց ծիծաղել, որ մենք էլ ժպտացինք ակամայ, առանց հասկանալու, թէ բանն ինչումն էր:

—Այ մարդ, ես քեզ ո՞ւմ ետեւիցն եմ ուղարկել,— դարձաւ նա ծառային, որ կանգնած էր մի շատ անյարմար դրութեան մէջ:

—Կայարան, ձեր ազգականների,— կակազեց յարդէ գլխարկը:

—Եւ մինչեւ հիմա դու նրանց դեռ չես ճանաչում. քանի անգամ տեսել ես ու բերել ինքդ:

Ծառան մի ոտից միւս ոտի վրա էր անցնում, ու վերջապէս մրթմրթաց.

—Է՜հ, ես ի՞նչ գիտնամ, այս բոլոր եւրոպացիք այնպէս նման են միմիանց:

Բանը պարզուեց ընդհանուր ծիծաղով. պ. Jiraud մեզ ներս հրաւիրեց միասին նախաճաշելու եւ ծառային նորից կայարան վազցնել տուեց:

Բանից դուրս եկաւ, որ այդ միակ երկարաբեխ ճապոնացին մի պարզ ֆրանսիացի էր, ֆրանսիական դեսպանատան ատաշէ: Բայց ինչպէս Ճապոնում ապրող շատ եւրոպացիներ, նա իր կեանքն ու կենցաղը բոլորովին